


ՀԱՄ Կ (Բ) Կ XVII ԿՈՆՖԵՐԱՆՍ

**ՀԱՄ Կ (Բ) Կ
XVII ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
ԲԱՆԱԶԵՎԵՐԸ**

10 APR 2018

ՀԱՄ Կ (Բ) Կ XVII ԿՈՆՖԵՐԱՆՍ

ՀԱՄ Կ (Բ) Կ
XVII ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
ԲԱՆԱԶԵՎԵՐԸ



Գ Ն Տ Ա Գ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՅԵՐԵՎԱՆ-1982

1/4

ՊԵՏՏՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՊԵՏՏՐԱՏ 7126 (Բ)
Պ ՏՎԵՐ 594
ՏԵՐԱԺ 20.000



11-361849

Հանձնված է արտագրության 19/11—1932 թ.
Տպագրված է 23/11 1932 թ.,

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ 1931 թ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ 1932 թ. ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Ընկ. Որչոնիկիձեյի գեկուցման առթիվ բնդունված բանաձևը)

I. 1931 թ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

XVII կուսակցական կոնֆերանսը գոհունակությամբ նշում է, վոր խորհրդային արդյունաբերությունը հենվելով նախորդ տարիների քաղաքական և տնտեսական նվաճումների վրա, 1931 թվականը բոլորեց նոր հաղթանակներով:

Վողջ սոցիալիստական արդյունաբերության արտադրանքը 1931 թ. կազմում էր 27 միլիարդ ո., վորը սալիս է աճում 21%-ով՝ 1930 թվի համեմատությամբ: ԺՏԳՆ-ի կողմից պլանավորվող արդյունաբերության արտադրանքը կազմում էր 21,8 միլիարդ ուրբ. 20,5%-ով աճում 1930 թվի համեմատությամբ, ալ թվում ծանր արդյունաբերության դժուր 11,8 միլիարդ ո.՝ 1930 թ. համեմատությամբ աճում 28%-ով: Այդպիսի աճում չի տեսել վոչ մի կապիտալիստական պետություն, անգամ կապիտալիզմի լավագույն շրջաններում:

1931 թ. արդյունաբերության մի շարք ճյուղեր հնգամյա պլանի իրենց առաջադրությունը կատարեցին և գերակատարեցին $2\frac{1}{2}$ —3 անգամ (նավթի արդյունաբերությունը, էլեկտրոտեխնիկան, մեքենաշինությունը ամբողջապես վերցրած, հրուշակային և ձկնորսության արդյունաբերությունը):

1931 թ. արդյունքներով ապահովված է արդյունաբերության հրեղային կատարումը չորս տարում:

Միևեույն ժամանակ քուր կապիտալիստական յերկրներում 1931 թվականը յեղավ ամենամոռեղ, կապիտալիզմի պատմության մեջ շտեմնված ճգնաժամի չարունակման և խորացման տարի, ճգնաժամ, վորի հետևանքով հսկայական չափով սղմվեց արտադրությունը և գրեթե լիովին կանգ առավ շինարարությունը:

Գործադուրկների թիվը Յեվրոպայում և ՀԱՄՆ-ում անցավ 25 միլիոնից, չափազանց իջավ աշխատավարձը և բացարձակապես աղքատանում են տասնյակ միլիոնավոր աշխատավորներ, մինչդեռ խորհրդային Միությունում միանգամայն վերացվեց գործադուրկությունը, արտադրության և շինարարության մեջ գրադված լանդորների թիվը 1931

թ. ամենաքանակ 2 միլիոն հոգւով, իսկ աշխատավարձը 1980 թ. համեմատութեամբ ամենաքանակ 16%-ով:

Մեկ անգամ էս փաշուհ կերպով հաստատովեց ամենաութեղի զո-
րիակիստանկանի իրարեմի գերազանցութեանը՝ կապիտալիստանկանի իրա-
ւոյթի նկատմամբ:

Վոդջ արդյունաբերության ընդհանուր աճմանը զուգընթաց, 1931 թ. ամենախորոմակ վերակական տեղաշարժեր տեղի ունեցան արդյունաբերության ներսում կուսակցության, տնտեսավար-կազմակերպիչների, պրոֆմիուսյունների, հարվածայինների, լավագույն ինժեներ-տեխնիկական աշխատողների ջանքերով, վոդջ բանվոր գատակարգի ջանքերով լայն մասշտաբով արմատացվեց նոր տեխնիկան և յուրացվեցին նոր արտադրություններ:

Արտադրութեան տեխնիկայի տիրապետումով Ստալինգրադի տր-
բակտորի գործարանում և «Կրասնիյ Պլուտիլովեց»-ում, Խարկովի տր-
բակտորի գործարանի գործարկումով և հաջող ծափալումով, վողջ մե-
քենաշինութեան վերակառուցումով, Լյովբայն արտադրող գործարան-
ներին գործարկումով և ծափալումով, Մոսկվայի և Նիժնի-Նովգորոդի
ավտոմոբիլի գործարաններին գործարկումով—այս ամենով ստեղծվեց
ուժեղ արտադրական պատվանդան, վոր ապահովում է Ժողովրդական
տնտեսութեան, նրա հետ նաև գյուղատնտեսութեան հետագա տեխնի-
կական վերակառուցումը:

1931 թ. առաջին անգամը լինելով կազմակերպիչից և սկսեց ծավալվել էլեկտրիֆիկացիայի, նավթարդյունաբերության, ածխարդյունաբերության և սև մետաղաբերության համար անհրաժեշտ խոշոր սարքավորման և ուժեղ մեքենաների արտադրությունը: Յուրացվեց բարձրորակ պողպատների արտադրությունը: Առաջին անգամը լինելով լայնորեն կիրառվեց ալյումինը և էլեկտրական զոդումը: Ծավալվում և կալիի, ադոնի և ծծմբային պարարտանյութերի արտադրությունը: Ծավալվում և արհեստական թելի արտադրությունը:

Յերերի սոցիալիստական ինդուստրացման ուղղությամբ վերցրած կուրսին համապատասխան, 1931 թ. շարունակվեց, ընդ վերում զգալիորեն ավելի մեծ չափերով, միջոցների հետագա ներդրումն արդյունաբերության նոր շինարարության մեջ: ԺՏԳ-ի կողմից ղեկավարվող արդյունաբերության հիմնական շինարարության մեջ 1931 թ. ներդրվեց 7 միլիարդ ոտբրի, փորը գերազանցում է նախորդ 2½ տարում միասին վերցրած, և մտցվեց 3½ միլիարդ ոտբրի նոր հիմնական կապիտալ, այսինքն այնքան փութան նախորդ 2½ տարում միասին վերցրած:

Այսպիսով, 1931 թվականը հանդիսանում է վճռական տեղաշարժի տարի՝ նոր հիմնական կապիտալ շահագործման ղեկը տեսականից, զորն ազդեց հանդիսացավ, մեկ կողմից, չինաբարոյություն արագույն

ժամանակ, ժյուս կողմից՝ նախորդ տարիներում հիմնադրված մի շարք խո-
շորագույն սրբեկանների շինարարության ավարտման: 1931 թվին և
1932 թ. հունվար ամսին շահագործման են դրված՝ Նիժնի-Նովգորոդի
ավտոմոբիլի գործարանը, Պարկովի տրակտորի գործարանը, Մոսկվա-
յի ավտոմոբիլի գործարանը, Ուրալի ծանր մեքենաշինության գործա-
րանի առաջին հերթը, Սարատովի կոմբայնի գործարանը, Ուրալի պը-
դնձահանության գործարանը, խիբինի ապատիտները, տրուբշատկաները
և կրեկինգները, այլ թվում՝ խորհրդային ինժեներներ Շուխովի և Կա-
պելյուշնիկովի սխեմամով շինված կրեկինգը: Գործարկման նախորդա-
կին և զամբում Մագնիտոգորսկի և Կուզնեցկի գործարանների առաջին
հերթը, Բելեգնիկի առաջին հերթը, Նեվայի, Վոզնեսենսկու քիմիական
գործարանները, Գոլակալների (ШАРИКОПОДШИШНИК) գործարանը,
դադլյասի և գործիքի գործարանները Մոսկվայում և Ն. —Նովգորո-
դում: Գործարկված է 79 ամխահանք՝ 28 միլիոն տոնն կարողությամբ
և ելեկտրական կայաններ՝ 1 միլ. կվ. կարողությամբ, այսինքն գրե-
թե ալյուրան նախորդ յերկու տարիներում (Զուլեվի, Շտերովի,
Կուզնեցկի, Մագնիտոգորսկի, Բելեգնիկի ջերմա-ելեկտրոցենտրալը և
այլն): Դրանից բացի, Դնեպրի համաշխարհային նշանակության ունե-
ցող հիդրո-ելեկտրական կայանի կառուցման աշխատանքը 1931 թ.
ալյուրան առաջ դնաց, վոր ապահովում է նրա նախատամկետ ավարտում
ու գործարկումը 1932 թ. ամռանը:

Այս խոշոր որչեկտները և ելեկտրոկայանների նոր վիթիարի կարողութունների գործարկումը արժատաեան փոփոխություններ են ժողովրդական տնտեսութեան տեխնիկական պատմանը տնտեսական և արագ առաջխաղացման նոր հնարավորություններ :

Մագնիսադորսկի ու Կուզնեցկի մետալուրգիական գործարանների և
նրանց կից Կոբա-բլիժական կոմբինատների շինարարության հաջող
ծավալումով, միաժամանակ Կուզնեցկի ածխային ավազանի զարգացու-
մով, Ուրալի ծանր մեքենաշինության գործարանի և Սիբիրի լեռնագոր-
ծական սարքավորումների գործարանի շինարարությամբ ամուր հիմք
և կառուցված նոր ուժեղ ածխա-մետալուրգիական ելույթի համար, ի
գեղմս Ուրալ-Կուզբասյան կոմբինատի, ինչպես այդ նախատեսել եր
XVI կուսհամագումարը:

Հիմնական շինարարություն և արտադրություն ծավալումն հետ միասին ժամանակ՝ խորհրդային արդյունաբերությունն իր համար ստեղծեց և տեղեւորում և նոր բանվորական և տեխնիկական կադրեր շտեմնյա՝ շահերով: 1,8 միլ. սովորողներ ԺՏԳԽ-ի սխտեմում—այդպիսին և 1931 թ. կադրերի պատրաստության ուղղությամբ կատարված աշխատանքի արդյունքը: Յեթե 1931 թ. բաց և թողնված 21.000 յերիտասարդ իմեներ ու տեխնիկ, ապա 1932 թ.՝ 38 հազար, 1933 թ.՝ 85.000 հոգի: Յեթե ֆարգործուաներից 1931 թ. բաց և թողնված 51.000 հոգի, ապա 1932 թ.

բայ եւ թողնվելու 350.000 Ժ.: Այս նոր կազմերը, վորոնք ինքնով արագորեն աճում են, կուվելով նոր տեխնիկայի տիրապետման համար մղվող պայքարում, կկազմեն սոցիալիստական արդյունաբերության հետագա ծավալման կարևորագույն պայմանը:

1931 թվականը նույնպես մեծահասարակ տարի յեղավ այն տեսակետից, վոր գիտա-հետազոտական հաստատությունների ամբողջ ցանցը (ԽՍՀՄ Ինտելեկտուալ Սկալեմիայից սկսած մինչև ճյուղային ինստիտուտները) չըջաղարձ կատարեց սոցիալիստական շինարարության կարիքների սպասարկման ուղղությամբ և սերտորեն կապվեց արդյունաբերության հետ: Արդյունաբերության գիտա-հետազոտական հաստատությունները (ինստիտուտները և նրանց մասնաճյուղերը արտադրության վայրերում) անցած տարի 141 միավորից հասան 205 միավորի: արդյունաբերական ցանցի գիտական աշխատողների թիվը 6 հազարից բարձրացավ 121½ հազարի, զգալի չափով ավելացավ բանվորական շերտը: Սրա հետ մեկտեղ պետք է նշել այն հանգամանքը, վոր կան մի շարք խոշորագույն գիտական-տեխնիկական նվաճումներ, վորոնք իրացված են տեխնիկական վերակառուցման պրոցեսում (Ֆերրո-ձուլվածքներ, հատուկ մետաղներ, թեթև մետաղներ, ավիացիա, պլաստիկ զանգվածներ, նոր շինանյութեր, համակցված գյուղատնտեսական մեքենաներ, հումքի նոր տեսակներ և տեխնոլոգիական պրոցեսների մի շարք կատարելագործումներ):

1931 թ. սկսվեց աշխատանքի կազմակերպման, արդյունաբերության ամբողջ աշխատանքի կազմակերպման վերակառուցումն ընկ. Ստալինի առաջադրած դրույթներին հիման վրա, վորոնց իրագործումը արդյունաբերության հետագա հաջողությունների պայման է հնդիսանում նոր պայմաններում—աշխատավարձի սիստեմի վերակառուցումը, պայքար հավասարեցման և ղեկավարության դեմ, պայքար բանուժի հասունության դեմ, պայքար՝ բանուժն արդյունաբերության մեջ կազմակերպված ձևով ներգրավելու և բանվորների բնակարանային-կենցաղային պայմանների հետագա բարելավման համար, տնտեսաշարժի առաջացումն ու ամրացումը, միավորումների փոքրացումը՝ նրանց ձեռնարկություններին մոտեցնելու և կոնկրետ ղեկավարություն ուժեղացնելու նպատակով, պրոլետարական արտադրական-տեխնիկական ինտելեկտի պատրաստման աշխատանքի հետագա ծավալումը, հին շխարհի ինժեներ-տեխնիկական ուժերի հանդեպ վերաբերմունքը փոխելը՝ նրանց ավելի մեծ ուշադրություն ու հոգածություն ցույց տալու ուղղությամբ, նրանց ավելի մեծ չափով աշխատանքի ներգրավելու և նրանց նախաձեռնությունը խրախուսելու ուղղությամբ:

Այսպիսով, հնգամյակի յերրորդ, մեծական տարին վերջանում է այնպիսի արդյունքներով, վորոնք նշանակում են նոր, հզոր տեխնիկական պատվանդանի ստեղծում յերկրի փողջ ժողովրդական տնտեսության

համար, առաջին հերթին՝ ծանր արդյունաբերության վերակառուցման համար: Դրանով իսկ պետք է լուծված համարել սոցիալիստական տնտեսության հիմնական կապիտալի պրոլիմը, վորը հնարավորություն է տալիս, ծանր արդյունաբերության ծավալման հետագա վիթխարի թափի հետ միասին, զարգցնել թեթև արդյունաբերությունն ու սննդաբերությունները, և գյուղատնտեսական մեքենայիչության, ելեկտրոշինարարության ու քիմիական արդյունաբերության միջոցով նոր տեխնիկական հիմք է ստեղծում գյուղատնտեսության հետագա վերակառուցման ու մեքենայացման համար:

XVII կուսակցական կոնֆերանսն արձանագրում է, վոր մեր յերկրի մեծահասարակ սոցիալիստական ինդուստրացման, սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ու ավարտման և ԽՍՀՄ-ի տնտեսական անկախության ապահովման այն կուրսը, վորն աղգարարեց կուսակցության XIV համագումարը և վորը զարգացրին XV և XVI համագումարները, կատարվում է վիթխարի հաջողություններով: Իյդ հաջողությունները հնարավոր դարձան շնորհիվ այն հանգամանքի, վոր հետեվողականորեն կիրառվեց հակահեղափոխական տրոցկիզմին ու աջ տրոցիստներին ջախջախող կուսակցության գլխավոր դիմը, լենինյան կի-ի ղեկավարությամբ:

II. ԱՐԴՅՈՒՆԱՅԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չնայած այս բոլոր հսկայական նվաճումներին, 1931 թ. տարեկան զլանի քանակական և վորակական ցուցանիշները թերակատարվեցին:

Դրա հիմնական պատճառները հնդիսացան.

1. տրանսպորտի վատ աշխատանքը 1931 թ. առաջին յեռամսյակում. վորն արգելակեց արդյունաբերության արագ զարգացումը.

2) խոշոր թերությունները հենց իրեն՝ արդյունաբերության աշխատանքում, ամենից առաջ թերություններն աշխատանքի կազմակերպման գործում (հատկապես ղեկավարությունը), աշխատավարձի սիստեմում (հավասարեցումը), ներգործարանային պլանավորման և տեխնիկական ղեկավարության ասպարիզում, վորոնց արդյունքն այն յեղավ, վոր աշխատանքի արտադրողականության և ինքնարժեքի պլանը թերակատարվեց:

3) ղեկավար տնտկազմակերպությունների խոշորությունն ու կտրուկաժուրությունը ձեռնարկություններից, ձեռնարկությունների անբավարար կոնկրետ ղեկավարությունը միավորումների կողմից:

4) աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության միանգամայն անբավարար հարաբերության հետևանքն այն յեղավ, վոր աշխատավարձի ֆոնդերի զգալի գերծախս կատարվեց, վորպիսին ինքնար-

ժեքի իջեցման պլանային առաջադրություն թերակառքման կարևորագույն պատճառներից մեկն է հանդիսանում:

5) տնտեսվարիկ անբավարար արմատացումը.

6) կատարման ստուգման անբավարար լինելը:

Կոնֆերանսը գտնում է, վոր այս հիմնական թերությունների վերացման վրա պետք է կենտրոնացվեն կուտակցության և բանվոր դասակարգի ուժերը, վորպեսզի ապահովվի 1932 թ. պլանի կատարումը, վորպեսզի ե՛լ ավելի մեծ չափով, քան 1931 թ., ոգտագործվեն այն հնարավորությունները, վորը տալիս է արդյունաբերությանը տնտեսության սոցիալիստական սիստեմը:

III. 1932 թ. ՊԼԱՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ամբողջ արդյունաբերության դժուր ըստ պլանի 1932 թվի համաքառամանված է՝ ընդհանուր արտադրանք 37,5 միլիարդ ռ., ինքնարժեքի իջեցում՝ 7%-ով: Բանվորների թիվն ամբողջ արդյունաբերության մեջ (ներառյալ շինարարությունը) պետք է ավելանա 1,2 միլիոն հոգով: Աշխատավարձը—11%-ով՝ արդյունաբերության մեջ և 5,6%-ով՝ շինարարության մեջ: Աշխատանքի արտադրողականությունը՝ 22%-ով: Հիմնական աշխատանքների ծավալը, վորն ուղիղ կախման մեջ է գտնվում արտադրության քանակական և վորակական ցուցանիշների կատարումից, լ՛ազմի՝ վերջին լրացուցիչ հատկացումների հետ միասին՝ 12 միլիարդ ռ., այդ թվում ծանր արդյունաբերությունը՝ 9,2 միլիարդ ռ.:

1932 թ. վողջ ժողովրդատնտեսական պլանի կենտրոնական խնդիրն է հանդիսանում սև մետալուրգիայի, ածխի և մեքենաշինության արտադրական և շինարարական ծրագրի կատարումը:

1) Այս կապակցությամբ արդյունաբերական պլանի առաջին արմատական խնդիրն է՝ անսլայման հաղթահարել սև մետալուրգիայի հետամնացությունը, 1932 թ. թուղի արտադրությունը հասցնել 9 միլ. տոննի, պողպատինը՝ 9,5 միլ. տոննի, գլանած յերկաթինը՝ 6,7 միլ. տոննի, վորակավոր մետաղների ձուլմանը՝ 676.000 տոննի, ընդ վորում վորակավոր և բարձրորակ մետաղների արտադրության ծավալումը հատուկ նշանակություն ունի՝ շնորհիվ ավտո-տրակտորային արդյունաբերության և մեքենաշինության այլ ճյուղերի վիթխարի աճման: Սև մետալուրգիայի շինարարական և արտադրական ծրագիրը կարգ է իրագործվել միայն այն դեպքում, յերբ պատշաճ ձևով ոգտագործվեն արտադրական հնարավորությունները, նյութական ռեսուրսները, եներգիան, բանվորների, տեխնիկական ու տնտեսական կադրերի գիտելիքներն ու ունակությունները, առաջին հերթին՝ յերթե ոգտագործվեն հենց իրեն՝ սև մետալուրգիայի հնարավորությունները:

Կոնֆերանսն ընդգծում է, վոր մետալուրգիայի կարևորագույն տեխնիկական խնդիրներից մեկն է հանդիսանում 1932 թ.՝ ապահովել հալոցների ճիշտ սնումը (շխտա): Այս խնդրի կատարումը մետալուրգիայի կողմից՝ անմիջականորեն կախված է ածխի, կոքսի և հանքային արդյունաբերությունից: Ածխի և կոքսի արդյունաբերությունը 1932 թ. պետք է բարձրացնի մետալուրգիական գործարանների տրվելիք ածխի և կոկսի վորակը: Ածխի և կոկսի մեջ մոխրի ու ծծմբի յուրաքանչյուր ավելորդ տոկոսը վատացնում է հալոցների աշխատանքը, ծանրաբեռնում է յերկաթուղային տրանսպորտի աշխատանքը, յուշորագույն կորուստներ է պատճառում ժողովրդական տնտեսությանը:

Կոնֆերանսն ուշադրություն է հրավիրում հրակայուն նյութերի արդյունաբերության աշխատանքի վճռական քարեկավման անհրաժեշտության վրա: 1932 թվին հրակայուն արդյունաբերությունը պետք է վողջ միայն լիովին կատարի նրան առաջադրված ծրագիրը, այլև բաց թողնի այնպիսի հրակայուն նյութեր, վորոնք իրենց վորակով յետ չըմնան իմպորտայինից: Այդ վերաբերում է ինչպես հրակայուն նյութերի հատուկ գործարաններին, այնպես ել մետաղագործական գործարաններին հրակայուն ցեխերին:

Կոնֆերանսը յերկաթուղային տրանսպորտի աշխատողների հատուկ ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, վոր անհրաժեշտ է բացառիկ հստակ աշխատանք կատարել մետալուրգիային հայթայթելու համար ինչպես հիմնական հումքը (հանքաքար, կոքս, ֆլյուս), այնպես ել ոժանդակ նյութերը (մագնեզիտներ, հրակայուն նյութեր, հումք՝ հրակայուն գործարանների համար): 1932 թ. յերթե կաթուղային տրանսպորտի աշխատանքով պետք է ապահովել հանքաքարի և կոքսի այնպիսի ռեզերվներ, վորոնք ապահովեն մետալուրգիական գործարանների անխափան աշխատանքը: Մասնավորապես անհրաժեշտ է ամենակարճ ժամանակում թեթևացնել Կրիվոյ Րոդի ավազանը այնտեղ կա կուտակված հանքաքրի հսկայական պաշարներից և փոխադրել գործարանները:

2) 1932 թ. արդյունաբերական պլանի յերկրորդ արմատական պայմանն է՝ կատարել 90 միլ. տոնն ածխի համույթի և 13,4 միլ. տոնն կոֆսի այրման պլանը: Այս ծրագիրն ապահովելու համար անհրաժեշտ է.

ա) ածխային բոլոր ավազաններում ածխահանման մասնակի մեխանիզացիայից վճռականապես անցնել բոլոր պրոցեսների կոմպլեքսային մեխանիզացիային, առաջին հերթին ձեռքի աշխատանքը մեքենայի աշխատանքով փոխարինելով՝ ամենից ավելի մեծ աշխատանք պահանջող պրոցեսներում—ածխաջարգումը, կոնվեյերի վրա ածելը, փորված տաբածությունը դերաններով պնդացնելը.

բ) արագացնել հանքահորերի փորումը՝ մեխանիզացիա և մշակման նոր յեղանակներ կիրառելով:

դ) վճռական տեղաշարժ կատարել ածխի վորակի համար մղվող պայքարում, առաջին հերթին այն ածխի նկատմամբ, վորը գործածվում է կոքսացման համար, վորի համար դարկ տալ ածխապարարտացման գործարանների և տեսակավորող սարքավորումների կառուցմանը, հատկապես արևելյան ավազաններում.

դ) վճռականորեն բարելավել բանվորների բնակարանային և կուլտուր-կենցաղային պայմանները, մշտական կադրեր ստեղծել և այդ հիման վրա լիովին վերացնել սեղոնայնությունը:

Հեռվից բերվող վառելանյութի գործածությունը վճռականորեն բարելավելու նկատառումով կոնֆերանսն առաջարկում է ժողովուրդը հին, Ծանր արդյունաբերության ժողովուրդին և տեղական կուսակցական կազմակերպություններին հատուկ ուշադրություն նվիրել տեղական վառելանյութային ռեսուրսների դարգացմանը (Յենթամուկովյան ավազան, Չերեմխովո, Հեռարևելյան ածխավազան, Յերգանայի ածուխ, Ուկրայինայի և Ուրալի գորշ ածուխը, Բորովիչի ածուխը, տորֆը, թերթաքարերը, Սիբիրի սալորոպիտային ածխի թորումը և այլն):

3. Արդյունաբերական պլանի յերրորդ արմատական խնդիրն է միությունական մեքենաշինության հետագա ծավալումն այն հաշվով, վոր հիմնական աշխատանքների ժողովրդատնտեսական պլանի կատարումն ապահովի խորհրդային արտադրության սարքավորումներով, ընդ վորում չողեկառի և վազոնի շինարարության, սե մետալուրգիայի և ածխարդյունաբերության սարքավորումների արտադրության ծրագիրը պետք է դրվի առաջնահերթ հարվածային առաջադրանքների շարքում:

Այս նպատակով անհրաժեշտ է ամեն կերպ դարկ տալ Ուրալի և Կրամատորի ծանր մեքենաշինության գործարանների, Սիբիրի լեռնագործական սարքավորումների գործարանի, Լուգանսկի չողեկառի կառուցման գործարանի և Նիժնի-Տադիլի վազոնաշինական գործարանի շինարարությանն ու գործարկմանը:

Յերկրի ինդուստրացման հաջողությունները, գյուղատնտեսության վերակառուցումը, քաղաքների և նոր արդյունաբերական կենտրոնների աճումը, ԽՍՀՄ-ի աշխատավորության նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացումը՝ նոր, ավելի բարձր պահանջներ են առաջադրում ժողովրդական տնտեսության այն ճյուղերի դարգացմանը, վորոնք սպասարկում են գյուղատնտեսությանը, քաղաքներին, ազգայնականության կուլտուր-կենցաղային կարիքներին: Այս պատճառով Ծանր արդյունաբերության ժողովուրդը 1932 թ. պետք է ապահովի մեքենաշինության այն ճյուղերի դարգացումը, վորոնք սպասարկում են գյուղատնտեսության բոլոր ճյուղերի կարիքները, թեթև արդյունաբերությանը, անտառային և թղթագործական արդյունաբերությանը, սնունդարդյունաբերությանը, կոմունալ շինարարությանը, ազգաբնակու-

թյան կուլտուր-կենցաղային կարիքները բավարարման համար նախատեսված ձեռնարկությունների շինարարությունը:

Իբրև 1932 թ. կարևորագույն մի խնդիր, պետք է դնել նորագույն տեխնոլոգիական մեթոդների արմատացումը մեքենաշինության բոլոր ճյուղերում՝ սարքավորումների ըստ ամենայնի լրիվ ոգտագործման, արտադրանքի միավորին ընկնող նյութերի մսխման կրճատման և արտադրանքի վորակի բարձրացման համար:

Մետաղի տնտեսման նպատակով անհրաժեշտ է լայն ծավալել կոնստրուկցիաների վերանայման աշխատանքը՝ նրանց ավելի թեթև դարձնելու, մշակման համար գործածվող ավելորդ նյութերը կրճատելու, ձուլարանների և դարբնոցների մնացուկները կրճատելու, կամավոր կոնստրուկցիաները զոդված կոնստրուկցիաներով փոխարինելու, խոտանը վոչնչացնելու, մնացուկներն ոգտագործելու ուղղությամբ, վորպեսզի, մեքենաշինությանը հատկացված մետաղի քանակի սահմաններում, ավելի մեծ քանակությամբ մեքենաներ արտադրվեն:

Մեքենաշինության մետաղի անխափան մատակարարման նպատակով անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել փոքր մետալուրգիայի (մեքենաշինական գործարանների մետալուրգիան) առավելագույն զարգացմանն ու դարգացմանը և նրան դնել հրակայուն նյութերի ու այլ նյութերի մատակարարման տեսակետից նույն պայմաններում, ինչ հիմնական մետալուրգիան:

Ժողովրդատնտեսական պլանի հիմնական խնդիրների, հատկապես Ծանր արդյունաբերության առաջատար ճյուղերի ուժգին դարգացման խնդիրների ապահովումը պահանջում է եներգետիկական բազայի հետագա ընդարձակում: 1932 թ. ելկտրոշինարարական ծրագիրը նշում է նոր կարողությունների գործարկումը Միության խոշորագույն կայաններում, մոտ 1,5 միլ. կիլովատ ընդհանուր քանակով, վորը հավասար է ամբողջ ԳՈՆԵԼՈՒ-ի պլանի ծրագրին: Ելկտրիֆիկացիայի 1932 թ. պլանի բնորոշ առանձնահատկությունը հանդիսանում է այն, վոր խիստ ավելանալու է հիդրոէլեկտրակայանների կարողությունը և ամենաուժեղ չափով զարգանալու յեն ջերմա-ելկտրոցենտրալները (մոտ 0,5 միլ. կվ. հիդրոէլեկտրակայաններում և 16 ջերմա-ելկտրոցենտրալների կառուցում, 800-000 կվ. ընդհանուր կարողությամբ, մոտ 300-000 կվ. տեպլոֆիկացիոն կարողության գործարկում 1932 թ.): Այս ծրագիրը պետք է կատարել ինչ գնով ուղղում է լինի:

Այսպիսով, 1932 թ. շինարարական ծրագրի կատարումը պետք է նոր, ել ավելի մեծ բեկում ապահովի ելկտրոմատակարարման ասպարեկում: Այս խնդրի կատարումն առանձնապես դնում է խոշոր ելկտրոտեխնիկական արդյունաբերության, գուրբինաշինության և կաթսայաշինության, մասնավորապես ազրեզատների կոմպլեկտային արտադր-

ման համար անհրաժեշտ ուժանդակ սարքավորումների և ապարատների արտադրություն ուժգին դարձացման հարցը:

Գումալուր մետալուրգիայի և ֆիմիայի նկատմամբ, վորոնց պլանի կատարումից է կախված ժողովրդական տնտեսություն մի շարք ճյուղերի աշխատանքը, կոնֆերանսը կուսակցական կազմակերպությունների, բանվորների, տնտեսավարների, ինժեներների և տեխնիկների ու չադրությունն և հրավիրում այն հանդամանքի վրա, վոր անհրաժեշտ և ապահովել կառուցվող ձեռնարկությունների առավելագույն գործարկումը և արագորեն տիրապետել արտադրական պրոցեսը թե՛ արգեն գործող և թե՛ նոր գործարկվելիք ձեռնարկություններում: Գումալուր մետալուրգիայի և քիմիական արդյունաբերություն հետագա լայնածավալ զարգացումը պահանջում է ամեն կերպ ծավալել մեքենաշինության համապատասխան ճյուղերը և մինչև այժմ արտասահմանից ներմուծվող մեքենաների ու ապարատների արտադրությունը:

1932 թ. արդյունաբերական պլանի վարկերադույն խնդիրներին մեկն է հանդիսանում ե՛լ ավելի ուժգին թափով ավելացնել թեթև և անդր արդյունաբերության արտադրանքը, քան անցյալ տարի, մոբիլիզացիայի յենթարկել հումքային ռեսուրսները, ծավալել նոր տեսակի հումքերի արտադրությունը, նրանց ռացիոնալ ոգտագործումը և բաց թողնվող արտադրանքի վորակի բարձրացումը:

Անհրաժեշտ համարել ուժեղ թափով կառուցել նոր մասկոմբինատներ, կոնսերվի և շաքարի գործարաններ, հացի գործարաններ և այլն, ինչպես նաև տեքստիլ կոմբինատներ Միջին Ասիայում և Արևմտյան Սիբիրում, նրանց գործարկել սահմանված ժամկետներին, վորպիսին պետք է վճարանորեն առաջ շարժի սննդագործական և թեթև արդյունաբերության տեխնիկական պատվանդանի վերակառուցման գործը:

IV. ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՌԱՅԻՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՎՈՐՊԵՍ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆ

Ամբողջ արդյունաբերության արտադրանքը 36 տոկոսով ավելացնելու, 12 միլիարդ ռուբլու հիմնական շինարարությունը, այդ թվում՝ ծանր արդյունաբերության գծով 9,2 միլիարդ ռուբլու հիմնական շինարարություն իրագործելու ուղղությամբ կուսակցության առաջադրած խնդրի կատարումը պահանջում է կուսակցության, բանվոր դասակարգի, ինժեներ-տեխնիկական ուժերի, արհեստակցական և տնտեսական կազմակերպությունների ջանքերի հսկայական լարում:

Գործող գործարանների աշխատանքին և նրանց արտադրության կազմակերպմանը պետք է առաջնահերթ ուշադրություն դարձվի, վորովհետև նրանց արտադրական պլանի կատարումը հիմնական շինարարության հաջող ընթացքի անհրաժեշտ պայմանն է հանդիսանում: 1932

թվին գործարկվելու յեն նոր կամ արմատապես վերակառուցված տանակ և հարյուրավոր ձեռնարկություններ, վորոնք զինված են լինելու համաշխարհային նորագույն տեխնիկայով, գործարկվելու յեն հսկայական արտադրական կարողություններ: Կարճ ժամանակում ձեռնարկություններ լիակատար կարողություն տիրապետելը, հրամատարական կադրերի և բանվորների ընտրություն ու ճիշտ դասավորումը, ընդհանրապես ձեռնարկության և մասնավորապես յուրաքանչյուր դադաչահի, յուրաքանչյուր մեքենայի, յուրաքանչյուր ագրեգատի աշխատանքի ճիշտ կազմակերպումը և այդ հիման վրա աշխատանքի արտագրողականություն բարձրացումը թե՛ նոր և թե՛ հին ձեռնարկություններում, — այդպիսին է արդյունաբերության վճարական կազմակերպության խնդիրը 1932 թ.:

XVII կուսակցական համագումարն անհրաժեշտ է համարում.

ա) վերջ տալ դիմադրություն—յուրաքանչյուր դադաչահի, յուրաքանչյուր մեքենայի, յուրաքանչյուր ագրեգատի վրա, յուրաքանչյուր բանվորական վայրում դնելով մշտապես աշխատող և տվյալ աշխատանքի համար պատասխանատու աշխատողի, արմատախիլ անել դիմադրությունը վերանորոգման, խոտանի դործում, արտադրանքը ձեռնարկության ներսում ցեխից ցեխ և դադաչահից դադաչահի փոխադրելու գործում:

բ) վերջ տալ աշխատավարձի հավասարեցմանը, վոր ջնջում է սահմանները վատ և լավ աշխատանքի միջև:

գ) ապահովել աշխատանքի վարձատրության հավասարեցման վերջնական վերացումը արդյունաբերության ճյուղերի միջև, աշխատավարձի մակարդակի տեսակետից առաջին տեղերն ապահովելով մետալուրգիայի, ածխի և մեքենաշինության համար:

դ) աշխատանքի ճիշտ կազմակերպման և ներգործարանային պլանագործման հիմքում պետք է դրվի տեխնիկական նորմավորումը: Ձեռնարկություններում տեխնոլոգիական կազմակերպման պատասխանատվությունը դնել դիրեկտորների, տեխնիկական դիրեկտորների և ցեխային ինժեներ-տեխնիկական անձնակազմի վրա:

յ) առաջին պլանի վրա դնել վարպետի և բրիգադիր-հրահանգչի դերը, վորպես աշխատանքային պրոցեսների անմիջական կազմակերպիչների (ընդարձակելով նրանց իրավունքները), վորի համար ուշիուով ընտրել վարպետների և բրիգադիրների կազմը, նրանց համար ապահովել լավագույն նյութական գրությունը և անհրաժեշտ տնտեսական հեղինակությունը ցեխում, ձեռնարկությունում:

զ) առավելագույն հոգածություն և ուշադրություն ցուցաբերել ինչպես հին, այնպես էլ նոր սերնդի ինժեներ-տեխնիկական անձնակազմի հանդեպ, տեխնիկների և ինժեներների համար ապահովել հանձնարարված աշխատանքի պատասխանատու ղեկավարի պատշաճ տեղը և

խրախուսել նրանց նախաձեռնությունը նոր արտադրություններ կազմակերպելու, նյութերի տնտեսման և արտադրանքի վորակի լավացման ռազմական-կառավարական միջոցառումներ վորոնելու և կիրառելու գործում, արտադրության կազմակերպումը լավացնելու գործում և այլն.

ե) տնտեսաշխարհի և պայմանադրային կարգապահության հետադաժանումը.

ը) ապահովել ձեռնարկությանն ու աղբյուրային հասցված կոնկրետ ղեկավարությունը, ուշի ուշով ստուգել և ապահովել տրված առաջադրության կատարումը, տնտեսարմինների ղեկավարների կողմից տիրապետել արտադրության տեխնիկական, տնտեսական և ֆինանսական կողմին:

XVII կուսակցական կոնֆերանսը հավանություն է տալիս ՀամԿ(բ)ԿԿ-ի վորոշմանը թեթև ու անտառային արդյունաբերություն ժողկոմատներ ստեղծելու և ԺՏԳՈ-ը Ծանր արդյունաբերության ժողկոմատի վերածելու մասին:

V. ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Կոնֆերանսը գտնում է, վոր 1932 թվին հիմնական շինարարությունն պլանը կատարելու և տարվա ընթացքում նոր ձեռնարկություններ առավելագույն չափով գործարկելու համար անհրաժեշտ է.

ա) կոնկրետացնել նյութական ու ֆինանսական միջոցները և մարդկային ուժերը շինարարության այն կարևորագույն ոլորտներում, վորոնք 1932 թ. ընթացքում կարող են գործարկվել հերթ առ հերթ կամ մեծությամբ:

բ) վորջնացնել սեզոնայնությունը և անցնել ամբողջ ֆրոնտով շինարարության ամբողջ տարվա ընթացքում, ամեն կերպ ոգտագործելով խոշորագույն շինկազմակերպությունների և կառուցող մշտական բանվորների աճող կազմերի 1931 թ. փորձը.

գ) պատրաստել տարածություններն ու ոժանդակ ձեռնարկությունները և խնամքով մշակել շինարարության վարման պլանը.

դ) լայնորեն արմատացնել մեխանիզացիան և լրիվ ոգտագործել մեխանիզմները.

ե) ամեն կերպ արմատացնել և զարգացնել նոր ու տեղական շինանյութերը և նրանցից շինված կոնստրուկցիաները.

զ) վճռականորեն շարունակել մետաղը փայտով և յերկաթաբետոնով փոխարինելու աշխատանքը.

է) ելլալով վճռաբար անցնել ստանդարտ տիպային և հավաքական շինարարությունը, չենքերի՝ փորձով արդարացված տիպերի արմատացման հիման վրա.

ը) վճռականորեն անցնել աշխատանքի պրոգրեսիվ-գործարքային փորձարմանը և սրաբարել հոսունություն դեմ:

Նոր ձեռնարկությունների լրիվ կարողության տրադյուրացման համար բացառիկ նշանակություն ունի, ինչպես ցույց տվեց 1931 թ. փորձը, այդ գործարանների գործարկման ճիշտ նախադատրաստումը, Դրա համար անհրաժեշտ է.

ա) ժամանակին պատրաստել նոր ձեռնարկությունների ինժեներ-տեխնիկական կազմերը, հրահանգիչ-բրիգադիրները և բանվորական ռեժի, մասնավորապես ստեղծել կառուցողների մշտական կազմեր.

բ) ժամանակին պատրաստել սահմանակից արտադրությունները և ժառանգարման բաղաները.

գ) առանձին մասերն ու զեկերը գործի գցել արդեն իսկ մոնտաժի գործեսում, չսպասելով ամբողջ գործարանի գործարկմանը:

1932 թվին հատուկ ուղադրություն պետք է դարձնել նոր ձեռնարկություններում բնակարանային ու կուլտուր-կենցաղային շինարարություն ծավալելուն, դրա համար ամեն կերպ ոգտագործելով տեղական և նոր շինանյութերը, լայնորեն գործադրելով ստանդարտ տիպային ու հավաքական շինարարությունը:

VI. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԽԱՆԻԶՄԱՆ ՑԵՎ ՎՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

XVII կուսակցական կոնֆերանսը բոլոր կուսակցական կազմակերպությունների և իրեն՝ արդյունաբերության ուղադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, վոր անհրաժեշտ է արագացնել մեծ և ծանր աշխատանքների մեխանիզացիան ինչպես արտադրության, այնպես եւ շինարարության մեջ, հատկապես այնպիսի ճյուղերում, ինչպես քարածխի, մետաղաբերության, լեռնահանքային, փայտամթերման, տորֆի մշակման աշխատանքները, տրանսպորտային և բարձման-դատարկման աշխատանքները:

Մեխանիզացիայի լայն արմատացումը միանգամայն անհրաժեշտ է գտնում ինչպես բեռների հսկայական հոսանքների փոխադրությունն պահանջող արտադրության և շինարարության պլանի հաջող կատարման համար, այնպես եւ ծանր աշխատանքներում և միասակար արտադրություններում մեծի աշխատանքը փոխարինելու համար:

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում, վոր արդեն իսկ 1932 թ. պլանում նախատեսվի արդյունաբերության թված ճյուղերին մեխանիզմներ և յերկաթուղային ու ավտոմոբիլային տրանսպորտի միջոցներ ռեժի թափով մատակարարելու գործը:

Արդյունաբերության վողջ հետագա զարգացման հիմքում պետք է դրվի աշխատանքի արտադրողականության արագ բարձրացումը, վոր-

պիսին միանգամայն իրագործելի չե դառնում շնորհիվ նոր մեքենաների և ապարատների գործադրման: Ընթացիկ տարում արդյունաբերության բոլոր ներքին ուսուրանքը և թաղնված հնարավորությունները մոբիլիզացիայի յենթարկելու առանձնապես սուր անհրաժեշտությունը, տեխնիկական վերակառուցման վիթխարի խնդիրների հիման վրա (այդ թվում՝ արդյունաբերության աշխարհագրական ձիշտ տեղադրման և իրար մոտիկ արտադրությունների տեխնիկական համակցման խնդիրը), պահանջում է բացառիկ ուշադրություն ցուցաբերել վերակառուցման ցանկիչների նկատմամբ, թե տնտեսական (ինքնարժեք, աշխատանքի արտադրողականություն և այլն), և թե՛ տեխնիկական ցուցանիշների գծով, վորոնք կազմում են նրանց նյութական հիմքը (մեքենաների և ագրեգատների կարողությունների պատշաճ ողորդործում, վառարանների ողորդործման համապատասխան կոնֆիցիենտներ, տեխնոլոգիական պրոցեսների պատշաճ արագություն և այլն):

